Օ Ր Ա Կ Ա Ր Գ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2016 թվականի մայիսի 4-ի՝ ժամը 14:00-ի նիստի

1. **Միջազգային գործունեության վիճակը և խնդիրները:**

   Զեկուցող՝ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր **Գ.Ի.Վարդանյան:**

2. **Ուսումնաարտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական փորձառությունների կազմակերպման վիճակը և դեկանատների ու ամբիոնների խնդիրները:**

   Զեկուցող՝ ուսանողների և շրջանավարտների հետ աշխատանքների գծով պրոռեկտոր **Ս.Ս.Խաչատրյան:**

3. **Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության դոկտոր Դավիթ Ներսիկի Հախվերդյանի պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու որակավորման գործի կրկնական քննարկման մասին: Հիմք՝ ՀՀ ԲՈՀ-ի 12..03.2016 թ., N 58-02 գրություն:**

   Զեկուցող՝ մրցութային հանձնաժողովի նախագահ **Ս.Ա.Գևորգյան:**

4. **Դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:**

   Զեկուցող՝ մրցութային հանձնաժողովի նախագահ **Ս.Ա.Գևորգյան:**

   1) **Հրանուշ Սերյոժայի Գաբրիելյան**՝ միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու:

5. **ՀՀ 2017 թ. պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու նպատակով գիտական կազմակերպության, առանձնացված գիտական կամ գիտակրթական ստորաբաժանման (ընդհանուր օգտագործման կենտրոնի,**

լաբորատորիայի) գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերի հայտերը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր **Գ.Ի.Վարդանյան:**

6. **Ընթացիկ հարցեր:**

1) **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսա-տնտեսագիտական քոլեջի կանոնադրությունը հաստատելու մասին:**

Զեկուցող՝ ռեկտոր **Կ.Լ.Աթոյան:**

2) **Ուսումնական գործընթացի աշխատանքների բարելավման մասին**:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր **Պ.Ա.Քալանթարյան:**

3) Մարքեթինգի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Արարատ Եղիշեի Զաքարյանի** և նույն ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու **Գևորգ Հարությունի Պապոյանի «Փոխհարաբերությունների մարքեթինգը սպառողական շուկաներում»** ուսումնական ձեռնարկի (236 էջ ծավալով) հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր **Գ.Ի.Վարդանյան:**

Գիտական քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

04.05.2016 թ.